



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

21 May 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Սա անմոռանալի տարի էր և մենք բոլորս աշխատելով միասին հաղթահարեցինք բազմաթիվ խոչընդոտներ: Մենք դեռ շատ դժվարությունների առջև ենք կանգնած, բայց ես ոգեշնչված եմ մեր կատարած առաջադիմությամբ: Ես շատ հուզվեցի լսելով այս շաբաթվա ավարտական ելույթները, որոնցում ընդգրկված էին մեր աշակերտների տպավորությունները:

Աշխատակիցների շաբաթ

Քանի որ մոտենում ենք շաբաթվա վերջին, ես և կրթական գրասենյակը ցանկանում է հայտնել իր խորհին շնորհակալությունը մեր աշխատակիցներին իրենց ջանասիրության համար: Նրանք վերջնականապես կարողացան հաղթահարել դժվարին կացությունը:

Բրբենքի հանրային գրասարանի ամառային ընթերցանության ծրագիր և այլ հարստացնող ռեսուրսներ

Բրբենքի հանրային գրադարանը համացանցային ամառային ընթերցանության ծրագիր է հրամցնում: Այս անվճար ծրագիրը քաջալերում է մասնակիցներին ընթերցել ամեն օր և բարելավել կարդալու ընդունակությունը ամառային արձակուրդների ընթացքում: Հավելյալ տեղեկությունների համար [սեղմել այստեղ](#): Մեր [կայքում](#) կգտեղենք նաև ամառվա ընթացքում հասանելի լրացուցիչ ռեսուրսներ աշակերտների և նրանց ընտանիքների համար:

Բյուջե

Ինչպես քննարկվել էր կրթական գրասենյակի վերջին ժողովի ընթացքում, նահանգապետի առաջարկած բյուջեն \$13 միլիոն դոլարի կրճատում կնշանակի Բրբենքի դպրոցների համար: Նահանգի համայնքները իրենց դժգոհությունն են հայտնում այս կրճատումները կասեցնելու համար: [Մեղմել այստեղ ձեր օրենսդիր մարմիններին էլեկտրոնային նամակ ուղարկելու համար](#): Մենք դեռ կքննարկենք

բյուջեն կրթական գրասենյակի մի քանի ժողովների ընթացքում: Դուք կարող եք դիտել այդ ժողովները [սեղմելով այստեղ](#).

- Երեքշաբթի, մայիսի 26-ին երեկոյան ժ. 7 – ուսումնասիրության ժամ
- Հինգշաբթի, հունիսի 4-ին երեկոյան ժ. 7 – սովորական ժողով
- Չորեքշաբթի, հունիսի 10-ին երեկոյան ժ. 7 – ուսումնասիրության ժամ
- Հինգշաբթի, հունիսի 18-ին երեկոյան ժ. 7 – բյուջեի ընդունում

Դպրոցների բացումը 2020-21 ուսումնական տարվա ընթացքում

Հաջորդ շաբաթ, դուք հարցաթերթիկ կստանաք՝ այս տարի գարնանը ձեր ունեցած փորձի վերաբերյալ ստացած կարծիքը հայտնելու համար: Հաշվի առնելով այս տեղեկությունը, նահանգային, գավառի և առողջապահական կազմակերպությունների ղեկավարության ուղեցույցները, մենք կրթական նոր մոդել կմշակենք աշնան համար: Մենք կշարունակենք լսել ձեր կարծիքը և ապագա մի քանի շաբաթների ընթացքում ձեզ համար նոր տեղեկություն կուղարկենք: Մենք շատ մտածմունքներ ունենք մեր ֆինանսական վիճակի վերաբերյալ և թե ինչպիսին կլինի դպրոցների վիճակը աշնանը: Դրա պատճառով դուք անընդհատ տեղեկություններ կստանաք ամառվա արձակուրդների ընթացքում: Շարունակելով աշխատել միասին մենք ավելի կհզորացնենք ԲԴՄԾ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ